ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-075[7]-29.03.2019-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԿԵՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Ուժը կորցրած ճանաչել «Սահմանամերձ բնակավայրերում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի նոյեմբերի 20-ի ՀՕ-156-Ն օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը և 3-րդ հոդվածի 3-րդ մասը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2018 թվականի հունիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-338-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի և հարակից օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
ՀՀ ԱԺ «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Նախագծի 14-րդ հոդվածով առաջարկվում է փոփոխություններ կատարել Օրենսգրքի 55-րդ հոդվածում, 44-րդ հոդվածով առաջարկվում է փոփոխություններ կատարել Օրենսգրքի 381-րդ հոդվածում: Այդ կապակցությամբ, առաջարկվում է Նախագծի 14-րդ և 44-րդ հոդվածներով խմբագրել Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 381-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետերը: Մասնավորապես, քանի որ գործող կարգավորմամբ ծախսագրում կատարվում է միայն այն ՀՂՄ կտրոններով, որոնց վրա նշվում է համապատասխան ապրանքը	Չի ընդունվել	Բեռնափոխադրումներ իրականացնող տնտեսավարող սուբյեկտների կողմից արտասահմանում կատարվող ծախսերը փաստաթղթավորելու մասով ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքի նախագծով արդեն իսկ առաջարկվում է համապատասխան լուծում: Մասնավորապես, նախատեսվում է, որ նախագիծն ընդունելուց հետո ՀՀ կառավարության որոշմամբ կսահմանվի այդ ծախսերի փաստաթղթավորման կարգ: Ինչ վերաբերում է մյուս ոլորտներում գործունեություն իրականացնող տնտեսավարող

	համապատասխան պետության օրենսդրական կարգավորումներից), այսպիսով չեն կարողանում ծախսագրել իրականում ծախսագրման ենթակա բավականին մեծ ծախսեր: Այստեղ խոսքը հատկապես դիզելային վառելիքի և ավտոմասերի ձեռքբերման մասին է: Ընդ որում, խնդիրը չի կարող լուծվել նաև փոխանցումների միջոցով աշխատելու դեպքում, քանի որ հավելյալ ծախսերն այդ քանակի մեջ բավականին զգալի են: Այսպես, դիզելային վառելիքը Ռուսաստանի Դաշնությունում կանխիկով գնելու դեպքում 1 լիտրի արժեքը 36 ռուբլի է, իսկ եթե այն ձեռք է բերվում փոխանցումով, ապա ընդհանուր փաստացի արժեքը 1 լիտրի համար կազմում է 39 ռուբլի: Ըստ այդմ, առաջարկվում է բեռնափոխադրող և նմանատիպ այլ կազմակերպությունների մասով Օրենսգրքի 381-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսել հատուկ նորմ, որով շրջանառության 40%-ը ծախսագրվում է որպես դիզելային վառելիքի և ավտոմասերի ձեռքբերում: Նույն խնդիրն առկա է նաև այլ տեսակի տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտների մոտ՝ նրանք ևս չեն կարողանում ծախսագրել ծախսագրման ենթակա բազմաթիվ ծախսեր, քանի որ գործող կարգավորումն առաջացնում է մի շարք տեխնիկական խնդիրներ:		սուբյեկտների համար գնորդի ՀՎՀՀ չպարունակող ՀԴՄ կտրոնները որպես ծախսը հիմնավորող փաստաթուղթ դիտարկելու առաջարկությանը, ապա հայտնում ենք, որ նշյալ առաջարկությունն ընդունելի չէ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ դեպքում հնարավոր չի լինում ձեռնարկատիրական նպատակով ձեռքբերումները տարանջատել անձնական սպառման համար կատարվող ձեռքբերումներից: Մյուս կողմից, անհասկանալի է նաև ներկայիս գործող կարգավորումների պայմաններում առաջացող խնդիրների բովանդակությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նույնիսկ ՀԴՄ-ների միջոցով հնարավոր է դուրս գրել հարկային հաշիվներ կամ հաշիվ ապրանքագրեր, որոնք կարող են առանց որևէ խոչընդոտի օգտագործվել որպես ծախսը հիմնավորող փաստաթղթեր: Ստացվում է, որ բոլոր այս հնարավորությունների առկայության պայմաններում առաջարկվում է

	ՀՂՄ կտրոնը ծախսագրման հիմք հանդիսացող փաստաթուղթ ճանաչելը ժամանակին հանդիպեց հակափաստարկի՝ դրանով ավելացվում են այդ կտրոնի ոչ նպատակային օգտագործման և միտումնավոր թյուր տեղեկատվության շնորհիվ ավել ծախսագրումների և արդյունքում հարկի նվազեցման ռիսկերը: Պետք է նշել, որ գրեթե բոլոր տնտեսվարողների, այլ ոչ միայն ՓՄՁ-ների համար խնդիր հանդիսացող այս երևույթը գործնականում մեծ բաժին չունի կազմակերպությունների ծախսերի կառուցվածքում, սակայն մի շարք դեպքերում ՀՂՄ կտրոնը կարող է հանդիսանալ միակ հիմնավորող փաստաթուղթը: Այս առումով, եթե հնարավոր են չարաշահումներ ոչ նպատակային օգտագործման մասով, ապա ՀՂՄ կտրոնի կիրառման օրենսդրությամբ թույլատրվող դեպքում (կտրոնի վրա գնորդի ՀՎՀՀ-ի առկայության դեպքում կտրոնը կարող է կիրառվել ծախսագրման նպատակով) նույնպես կարող են լինել չարաշահումներ: Բացի դրանից, ներկայումս ՀՎՀՀ-ի առկայությունը կտրոնի վրա հնարավորություն է տալիս տնտեսավարողին հիմնավորել ծախսերը, սակայն հնարավորություն չի տալիս հաշվանցել ԱԱՀ-ն: Այս խնդրի լուծման նպատակով առաջարկվում է ՀՂՄ կտրոնների		հնարավորություն տալ «անդեմ» փաստաթղթերով հարկի գումարները նվազեցնել, ինչը նպատակահարմար համարվել չի կարող: Միևնույն ժամանակ, հայտնում ենք, որ նախագծի՝ Ազգային Ժողովի տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովում քննարկումների ժամանակ հանձնաժողովի նախագահի կողմից առաջարկ է ներկայացվել կատարելագործել գնորդի ՀՎՀՀ-ի նշումով ՀՂՄ կտրոնների հիման վրա ծախսագրումների կատարման համակարգը, ինչի կապակցությամբ Կառավարությունը, որպես լուծում, առաջարկել է նախագծով սահմանել, որ կանխիկ գործառնությունների առավելագույն սահմանաչափերը (միանվագ գործարքի համար՝ 300 հազ. դրամ, ամսական այդպիսի գործարքների համար՝ 3 մլն. դրամ) չեն տարածվում այն ՀՂՄ կտրոններով փաստաթղթավորվող գործարքների վրա, որոնցում նշվում է գնորդի ՀՎՀՀ-ն: Այդ լրացումն արդեն իսկ կատարվել է նախագծում:

	ծախսագրման համար սահմանել ամսական թույլատրելի չափ, որից ավել գումարի չափի կտրոնները չեն հանդիսանա ծախսագրման հիմք հարկային առումով, կամ հիմնավորվող ծախսերի կառուցվածքում տոկոս կամ համամասնություն, կամ էլ երկուսը միասին, օրինակ՝ 10%, բայց ոչ ավելի, քան 1 մլն ՀՀ դրամը:		
	Նախագծի 2-րդ հոդվածով, ի թիվս այլ կարգավորումների, առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել Օրենսգրքի 189-րդ հոդվածը: Խնդիրն այն է, որ 2018 թվականից սկսած, ըստ նշյալ հոդվածի, Հայաստանի Հանրապետությունում գրանցված (հաշվառված) բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար ճանապարհային հարկը հաշվարկվում է տարեկան մինչև 480.000 հայկական դրամ դրույքաչափերով՝ կախված թույլատրելի առավելագույն զանգվածից: Նախկին կարգավորման համեմատ՝ այս թիվը 2.6 անգամ ավելի է և փաստացի ոչ արդարացված, քանի որ երկրում ճանապարհների վիճակն այդ ընթացքում առանձնապես չի բարելավվել: Ընդ որում, ընթացիկ կարգավորման մեջ նման հարկ նախատեսված չէ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է ներել Օրենսգրքի 189-րդ	Չի ընդունվել	2018 թվականի հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված ճանապարհային հարկի պարտավորությունների ներումը անհավասար և անարդար հարկման պայմաններ կստեղծի պարտավորությունները բարեխղճորեն կատարած հարկ վճարողների և պարտավորությունները չկատարած հարկ վճարողների համար, ինչը նպատակահարմար չէ: Ինչ վերաբերում է 2018 թվականի ընթացքում ճանապարհային հարկի բեռի ավելացմանը, ապա միանշանակ չէ այն դիտարկումը, որ բեռն ավելացրել է: Բացի այդ, ոլորտի տնտեսավարող սուբյեկտների և նրանց միության հետ մեր բազմաթիվ հանդիպումների

	հոդվածով հաշվարկման ենթակա չվճարված ճանապարհային հարկը:		ընթացքում դժգոհությունը կապված է եղել ոչ այնքան ճանապարհային հարկի դրույքաչափերի հետ, որքան ճանապարհային հարկը ամբողջ տարվա համար միանգամից վճարելու օրենսդրական պահանջի հետ: Այս առումով, հարկ է նկատել, որ 2018 թվականն արդեն ավարտվել է և եթե անգամ նախատեսված լիներ, որ ճանապարհային հարկը վճարվում է ըստ ամիսների, 2018 թվականի 12 ամիսների համար ճանապարհային հարկը վաղուց պետք է ամբողջությամբ վճարված լիներ: Տեղեկացվում է նաև, որ նախագծով առաջարկվում է 2019 թվականի հունվարի 1-ից ընդհանրապես հանել Հայաստանի Հանրապետությունում հաշվառված բեռնատար ավտոմեքենաների ճանապարհային հարկը:
	Նախագծի 23-րդ հոդվածի և Օրենսգրքի 88-րդ հոդվածի կապակցությամբ՝ առաջարկվում է ոչ միայն չբարձրացնել գինու գործող ակցիզային հարկի դրույքաչափերը, այլ նվազեցնել դրանք առնվազն 50%-ով, քանի որ գինին	Չի ընդունվել	Մեծապես կարևորելով գինեգործության զարգացման անհրաժեշտությունը մեր երկրում՝ այդուհանդերձ գտնում ենք, որ ներկայացված առաջարկության ընդունումը այդ

	ռազմավարական ապրանք է, գինու արտադրությունն ունի խթանման կարիք, որպեսզի այն նաև ավելի մեծ ծավալներով արտահանվի: Ընդ որում, հարևան Վրաստանն արդեն փաստացի հանել է իր գինիների ակցիզային հարկը, ինչը մեծ առավելություն է տալիս նրանց ինչպես իրենց ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում:		խնդրի լուծման լավագույն ճանապարհը չէ, ինչը հիմնավորվում է հետևյալ հիմնական նկատառումներով. 1. Նախ, հարկ է նկատել, որ նախագծով գինու համար առաջարկվող ակցիզային հարկի դրույքաչափը նույնիսկ ավելի ցածր է, քան նախորդ տարիների տվյալներով գինու համար հաշվարկված ակցիզային հարկի արդյունավետ դրույքաչափն է: 2. Երկրորդ, նախագծով գինու համար առաջարկվող ակցիզային հարկի դրույքաչափի կիրառությունը նշանակում է, որ հայկական գինեգործության ավանդույթներն իրապես ներկայացնող, բարձրորակ և միջին ու բարձր գին ունեցող գինու համար դրույքաչափը ոչ միայն չի բարձրացել, այլ նաև էականորեն նվազել է: 3. Գինու ակցիզային հարկի դրույքաչափերի նվազեցումը որևէ կերպ չի կարող նպաստել գինու արտահանման ծավալների աճին, քանի որ, միևնույն է, արտահանումն ազատված է ակցիզային հարկից: 4. Գինու ակցիզային հարկի դրույքաչափի նվազեցումը նշանակում է, որ նվազեցված դրույքաչափը պետք է հավասարապես կիրառվի ոչ միայն տեղական

			արտադրության, այլ նաև ներմուծվող գինու համար, ինչն էլ, իր հերթին, նշանակում է, որ ներմուծվող գինին ներքին շուկայում սկսելու է ավելի ագրեսիվ ձևով մրցակցել հայկական գինու հետ:
	Առաջարկվում է ձեռնպահ մնալ ակցիզային հարկի տարեկան 4% բարձրացում նախատեսող կարգավորումից, քանի որ դա տանելու է մի շարք ապրանքների գների բարձրացման:	Ընդունվել է մասնակի	Ակցիզային հարկի հաստատուն դրույքաչափերը յուրաքանչյուր տարի 4 տոկոսով բարձրացնելու առաջարկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ նախագծով առաջարկվում է ընդհանրապես հրաժարվել ակցիզային հարկի արժեքային դրույքաչափերի կիրառությունից: Վերջինս նշանակում է, որ այլ հավասար պայմաններում, գնաճով պայմանավորված, ակցիզային հարկի մասնաբաժինը շարունակաբար նվազելու է ապրանքների գնի կառուցվածքում: Այս առումով, գոյություն ունի խնդրի լուծման երկու ճանապարհ: Առաջին, մի քանի տարի հետո կտրուկ բարձրացնել ակցիզային հարկի դրույքաչափերը՝ դրանով իսկ տնտեսավարող սուբյեկտներին պահելով մշտական անորոշությունների մեջ և անկանխատեսելի միջավայրում,

			իսկ շուկան ենթարկել ցնցումների: Եվ երկրորդ, նախագծի ընդունմամբ հայտարարել ակցիզային հարկի գծով քաղաքականության մասին՝ դրանով իսկ երկարաժամկետ հեռանկարում տնտեսավարող սուբյեկտների համար ձևավորելով կանխատեսելի հարկային միջավայր, ապահովելով ակցիզային հարկի դրույքաչափերի սահուն և փոքր տեմպերով բարձրացում, շուկան զերծ պահելով ցնցումներից: Միևնույն ժամանակ, տեղեկացվում է, որ առաջարկության ընդունումը կնշանակի պետական բյուջեի հարկային եկամուտների կորուստն ավելացնել տարեկան կտրվածքով ևս 2 մլրդ. դրամով: Այդուհանդերձ, հաշվի առնելով ԱԺ պատգամավորների մտահոգությունները, Կառավարությունն առաջարկում է փոխզիջումային տարբերակ, այն է՝ 4 տոկոսը փոխարինել 3 տոկոսով:
	Ինչպես նշվել է մասնագետների կողմից, եկամտային հարկի 23% դրույքաչափի սահմանումը չի լուծում գերփոքր տնտեսվարողների մոտ վարձու	Չի ընդունվել	Եթե խոսքը վերաբերում է նվազագույն աշխատավարձը չհարկելուն, ապա անհրաժեշտ է նկատի ունենալ, որ

	աշխատողներին գրանցելու, ստվերից դուրս բերելու հարցը, քանի որ նրանց մեծ մասը ստանում է մինչև 150.000 ՀՀ դրամ աշխատավարձ: Խնդրահարույց է նաև գյուղատնտեսության ոլորտում սեզոնային աշխատանք իրականացնողների՝ գործատուի մոտ գրանցման հարցը՝ հարկման բարձր դրույքաչափի տեսանկյունից: Սեզոնային աշխատողների հարցը այս կամ այն սրությամբ առկա է նաև այլ ոլորտներում: Եկամտային հարկի բեռը բոլոր ժամանակներում եղել է բավականին բարձր բոլոր տնտեսավարողների տեսանկյունից: Աշխատողների գրանցման հարցը ստվերի և չարաշահումների հիմնական բաղադրիչներից է եղել, ներկայացված օրենսդրական նախաձեռնությունը հնարավորություն չի տալիս վստահաբար խուսափել չարաշահումներից: Նվազագույն չհարկվող շեմի գոյությունը հնարավորություն կտա գրանցելու բոլոր աշխատողներին (նաև սեզոնային կամ գործարքային) և նաև հնարավորություն ներկայացնելու ճշգրիտ տվյալներ արդեն գրանցված աշխատողների աշխատավարձի վերաբերյալ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է Նախագծի 32-րդ հոդվածը խմբագրել՝ նախատեսելով աշխատավարձի չհարկվող շեմ՝ օրենքով սահմանվող նվազագույն աշխատավարձի չափով,		«Նվազագույն աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ նույն օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձը հարկման ենթակա չէ: Ինչ վերաբերում է նվազագույն չհարկվող շեմ կիրառելու առաջարկությանը, ապա մեր կողմից կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ նվազագույն ամսական աշխատավարձի չափով չհարկվող շեմի սահմանումը պետական բյուջեի հարկային եկամուտները կկրճատի տարեկան առնվազն 91 մլրդ. դրամով, ինչը հարկաբյուջետային կայունության ապահովման տեսանկյունից խիստ անկառավարելի ռիսկ է: Միևնույն ժամանակ, տեղեկացնում ենք, որ եկամտային հարկի համահարթ դրույքաչափերի կիրառության և դրույքաչափը շարունակաբար նվազեցնելու քաղաքականությունը նպատակ ունի ոչ միայն կրճատել թաքնված զբաղվածությունն ու ստվերային աշխատավարձերի մեծությունը, այլ նաև նպատակ

	ինչպես նաև նույն տրամաբանությամբ՝ եթե անձն ստանում է նվազագույն աշխատավարձ, ապա այն չպետք է հարկվի:		ունի նպաստել արտադրողական և բարձրորակ աշխատանքի խթանմանը, տնտեսական ակտիվության աստիճանի բարձրացմանը, արտահանմանը կողմնորոշված տնտեսությունների զարգացմանը, երկարաժամկետ և կայուն տնտեսական աճի ապահովման նախադրյալների ձևավորմանը:
	Առաջարկվում է Նախագծի 39-րդ հոդվածով նախատեսվող՝ Օրենսգրքի 258-րդ հոդվածի փոփոխություններով սահմանել նաև, որ հանրային սննդի ոլորտի ձեռնարկությունների կողմից փաստացի նույն վայրում նաև այլ գործունեությամբ զբաղվելու դեպքում 20% հարկային շեմը չեղարկվում է:	Ընդունվել է	Ներկայացված խնդիրը կարգավորվել է Աժ պատգամավոր Եղիշե Սողոմոնյանի կողմից ներկայացված առաջարկության հիման վրա:
	Առաջարկվում է Նախագծի 42-րդ հոդվածով նախատեսվող՝ Օրենսգրքի 267-րդ հոդվածի 5-րդ մասից հանել 3-րդ կետը: Դրանով հնարավորություն կտրվի միկրոձեռնարկատիրությանը վերաբերող արտոնյալ պայմանների ռեժիմը տարածել նաև մայրաքաղաքում միևնույն տեսակի գործունեության վրա: Առաջարկը հիմնավորվում է նրանով, որ մայրաքաղաքում վաստակած նույն	Չի ընդունվել	Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ շուրջ 41 հազ. շրջանառության հարկ վճարողներ զբաղվում են առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ: Ընդ որում, նրանց տարեկան իրացման շրջանառության միջին մեծությունը կազմում է ընդամենը 10.7 մլն. դրամ: Այս առումով, առաջարկության ընդունումը գործնականում նշանակում է

	հաշվի առնելով, պետք է նշել, որ ըստ վիճակագրության՝ Երևան քաղաքի աղքատության նվազեցման տեմպը մոտ 6 անգամ զիջում է Հայաստանի այլ քաղաքների աղքատության նվազման տեմպին, իսկ ընդհանուր աղքատ բնակչության 28%-ը ապրում է Երևանում՝ ավելի քան կրկնակի գերազանցելով ամենաաղքատ համարվող Շիրակի մարզում բնակվող աղքատների ցուցանիշը (մոտ 12%):		նշյալ տնտեսավարող սուբյեկտների հիմնական մասին տեղափոխել միկրոձեռնարկատիրության հարկման արտոնյալ համակարգ, ինչն ընդունելի չէ՝ հետևյալ հիմնական նկատառումներով. 1) առաջարկության ընդունման դեպքում կստացվի, որ ներքին շուկայում առևտրական գործունեությունը, միտված չլինելով արտահանմանը, հիմնական մասով ազատվում է հարկերից, ինչը որևէ տնտեսագիտական հիմնավորում չունի, 2) կխաթարվի միկրոձեռնարկատիրության հարկման արտոնյալ համակարգի հասցեականությունը, 3) կմեծանա ամեն գնով իրացման շրջանառությունները թերհայտարարագրելու և միկրոձեռնարկատիրության հարկման արտոնյալ համակարգում անարդարացիորեն «տեղավորվելու» տնտեսական շարժառիթը:
	Առաջարկվում է առհասարակ չհարկել շահաբաժինները՝ հաշվի առնելով այն, որ՝ 1) շահաբաժինների հարկումով հարկայինը հնարավորություն է ստանում շրջհարկով աշխատողների մոտ կատարել համալիր ստուգում՝ ծախսային	Չի ընդունվել	Շահաբաժինները չհարկելու առաջարկությունը ընդունելի չէ՝ հետևյալ հիմնական նկատառումներով. ա. միջազգային փորձի

	փաստաթղթերի մանրակրկիտ ստուգման միջոցով, իսկ չհիմնավորված շահաբաժինը կհարկվի որպես այլ եկամուտ՝ ավելի բարձր տոկոսադրույքով: Փաստացի շրջանառության հարկով հարկվողները կհարկվեն համապատասխան տոկոսադրույքով, իսկ շահաբաժիններ ստանալիս կհարկվեն եկամտային հարկի դրույքաչափերով: Շրջանառության հարկի հիմնական նպատակը ՓՄՁ-ներին փաստաթղթավորման պահանջից ազատումն է, սակայն ՓՄՁ-ին նորից դրվում է ճշգրիտ թղթաբանություն վարելու բարդ գործառույթի առջև՝ միայնակ հարկային վարչարարության և ճնշման լծակների առաջ, 2) շահաբաժինների հարկումը կրկնակի հարկում է, քանի որ միևնույն գումարն սկզբից հարկվում է առևտրային կազմակերպության մասով, այնուհետև դրա մասնակիցների ստացած շահաբաժիններից: Հարկման նման կարգ գործում է օրինակ Ֆրանսիայում, որտեղ ևս այդ կարգավորումը մշտապես եղել է դժգոհության առարկա: Սակայն ամեն դեպքում Ֆրանսիան չունի ներդրումների խթանման խնդիր, ինչպես Հայաստանը: Այժմ Հանրապետությունում գերխնդիր է ինչպես օտարերկրյա, այնպես էլ ներպետական մակարդակով ներդրումների ծավալի ավելացումը: Այստեղ ուսանելի և կիրառելի է Վրաստանի նոր օրենսդրության օրինակը, որտեղ 2017 թվականից հարկվում են շահաբաժինները՝ եկամտային հարկով, սակայն չի հարկվում կազմակերպության շահույթը՝ շահութահարկով: Նման մոտեցումը խթանում է միջոցները		ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պոտենցիալ ներդրողների համար ներդրում կատարելու որոշումների կայացման վրա ազդեցության տեսանկյունից շահաբաժինների՝ հարկման ենթակա լինելու հանգամանքը վճռորոշ չէ, բ. եթե անգամ որոշ պոտենցիալ ներդրողների (տվյալ դեպքում՝ ոչ ռեզիդենտ կազմակերպություններ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք) համար ներդրում կատարելու որոշումների կայացման վրա ազդեցության տեսանկյունից շահաբաժինների՝ հարկման ենթակա լինելու հանգամանքը վճռորոշ լինի, ապա, միևնույն է, ներդրողին հետաքրքրում է շահաբաժնի մասով վճարվելիք հարկերի ընդհանուր մեծությունը՝ անկախ այն հանգամանքից, թե հարկերի որ մասն է վճարվելու շահաբաժնի վճարման աղբյուր համարվող երկրում, և որ մասը՝ ռեզիդենտության երկրում, գ. մյուս կողմից, հարկ է նկատել, որ ոչ ռեզիդենտ կազմակերպությունների և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց՝ հայաստանյան աղբյուրներից

	բիզնեսում պահելն ու շրջանառելը՝ փաստացի խթանելով ներդրումները, 3) ի վերջո, Հայաստանի Հանրապետությունը բազմաթիվ, այդ թվում նաև զարգացած տնտեսություն ունեցող երկրների հետ չունի կրկնակի հարկումը բացառելու մասին համաձայնագրեր, ինչը նշանակում է պակաս շահագրգռվածություն այդ երկրների ռեզիդենտների կողմից Հայաստանի տնտեսության մեջ ներդրումներ կատարելու համար:		ստացվող շահաբաժինների հարկման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են նաև կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերով: Ընդ որում, հաճախ համաձայնագրերով նախատեսված են շահաբաժինների հարկման՝ ազգային օրենսդրությամբ սահմանված դրույքաչափերից ավելի ցածր դրույքաչափեր կամ շահութահարկից առհասարակ ազատում, դ. բացի այդ, անցած տարիների փորձը ցույց է տալիս, որ շահաբաժինների հարկումից ազատումը ոչ թե ծառայում է ներդրումների ներհոսքին կամ տնտեսական աճին, այլ հիմնականում ծառայում է որպես գործիք՝ հարկումից խուսափելու տարբեր մեխանիզմներ կիրառելու և ֆիզիկական անձանց կողմից ստացվող եկամուտները չհարկելու համար, ե. գործող Հարկային օրենսգրքով հնարավորություն է ընձեռված հետ ստանալ շահաբաժնից վճարված հարկը՝ այդ չափով վերաներդրում կատարելու պարագայում: Սա

			ուղղակի խթան է ներդրումներ ներգրավելու առումով, զ. եթե անգամ որոշ երկրների հետ մեր երկիրը չունի կրկնակի հարկումը բացառող համաձայնագրեր, պետք է նկատել, որ նախագծով արդեն իսկ առաջարկվում է նվազեցնել ոչ ռեզիդենտ կազմակերպությունների և օտարերկրյա քաղաքացիների ստացած շահաբաժինների հարկման դրույքաչափերը: Ինչ վերաբերում է ՓՄՁ սուբյեկտների մասով մատնանշված խնդրին, ապա հայտնում ենք, որ շահաբաժնից հարկերը հաշվարկվում են ֆինանսական հաշվառման կանոններով հաշվարկվող շահույթից և ֆինանսական հաշվետվությունների ոլորտը կարգավորող օրենսդրության համաձայն՝ բոլոր կազմակերպությունները պարտավոր են վարել հաշվապահական հաշվառում՝ միջազգայնորեն ընդունված ստանդարտներին համապատասխան: Հետևաբար, գտնում ենք, որ ՓՄՁ սուբյեկտների մասով խնդիրը

			պետք է կարգավորել վերջիններիս համար ֆինանսական հաշվառման ավելի պարզեցված ընթացակարգեր սահմանելու ճանապարհով, ինչը Կառավարության ուշադրության կենտրոնում է:
	Առաջարկվում է «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ֆինանսական կառույցների պետական տուրքերի բարձրացման հարցը քննարկել առանձին՝ որպես ոլորտի բարեփոխման հարց, քանի որ այն բավական խնդրահարույց է, ինչպես նաև չի հանդիսանում հարկային բարեփոխումների մաս:	Չի ընդունվել	Ֆինանսավարկային հատվածի կազմակերպությունների գործունեության համար անհրաժեշտ լիցենզիայի համար վճարվող պետական տուրքի դրույքաչափերի վերանայման հարցն ուղղակիորեն կապված է շահութահարկի և եկամտային հարկի դրույքաչափերի նվազեցման հետ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտները, որոնց գործունեությունը տնտեսության արտահանեի հատվածում չէ, չեն համարվում ուղղակի հարկերի գծով բեռի նվազեցման քաղաքականության շահառուներ: Հետևաբար, անհրաժեշտ է նրանց տնտեսած հարկերի որոշ մասը պետական տուրքի տեսքով հետ վերադարձնել պետական բյուջե:

			Այս մասին հստակ գրված է նաև նախագծերի փաթեթի ընդունման հիմնավորման մեջ:
	Գործող հարկային օրենսգրքի 390-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրոշմապիտակով դրոշմավորման ենթակա թռչնամսի պիտակավորման օրենսդրական պահանջը գործնականում կիրառելու հետ կապված առաջ են եկել խնդիրներ, քանի որ երկարաժամկետ պահպանման համար անհրաժեշտ -18 աստիճան պայմաններում հնարավոր չէ ստանդարտ պահանջներին բավարարող աշխատատեղեր և ընդունելի արտադրողականությամբ տեխնոլոգիական պրոցես: Հաշվի առնելով այս հանգամանքները, առաջարկվում է թույլատրվել է, որ պաղեցված թռչնամիսն առևտրային ցանցեր առաքվի արկղերի վրա սահմանված կարգով դրոշմապիտակով դրոշմավորված վիճակում:	Ընդունվել է	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
	Առաջարկվում է հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող նախագծի 57-րդ հոդվածի «շարունակում են համարվել» բառերը փոխարինել «չեն համարում» բառերով, քանի որ դա ավելի բարենպաստ լուծում է ՓՄՁ-ների գործունեության համար:	Չի ընդունվել	Նախ, մեր ունեցած տեղեկություններով, շատ չեն այն տնտեսավարող սուբյեկտները, որոնք իրենց իրացման շրջանառությամբ արդեն իսկ գերազանցել են 58.35 մլն. դրամի շեմը: Բացի այդ, ներկայացված առաջարկության ընդունումը նշանակում է, որ այն տնտեսավարող սուբյեկտները, որոնք 2019 թվականի անցած

			ամիսների ընթացքում գերազանցել են ԱԱՀ-ի 58,35 միլիոն դրամի շեմը և դարձել են ԱԱՀ վճարողներ, նախագծի ընդունումից հետո կրկին կհամարվեն շրջանառության հարկ վճարող: Վերոնշյալ առաջարկությունը անխուսափելիորեն ուղեկցվելու է մի շարք խնդիրներով՝ կապված այն հանգամանքի հետ, որ արդեն ԱԱՀ վճարող համարվող այդ տնտեսավարող սուբյեկտները հարկային հաշիվներ են դուրս գրել և գնորդ տնտեսավարող սուբյեկտներին ԱԱՀ գծով հաշվանցումներ կատարելու հնարավորություն են տվել: Այս պայմաններում, առաջարկության ընդունումը ենթադրում է գնորդ հարկ վճարողների համար լրացուցիչ հարկային պարտավորությունների (այդ թվում՝ տույժերի) ձևավորում, ինչը ոչնչով հիմնավորված համարվել չի կարող :
	Առաջարկվում է հիմնովին վերանայել վարկային կազմակերպությունների հիմնական գործունեության լիցենզիայի պետական տուրքի միանգամից բազմապատիկ բարձրացման վերաբերյալ	Չի ընդունվել	Ինչպես վարկային կազմակերպությունների (այդ թվում՝ դրանց մասնաճյուղերի և ներկայացուցիչների), այնպես էլ առհասարակ

	դրույթները: Այս որոշումն իր ազդեցությունն է թողնելու հատկապես փոքր վարկայինների վրա ու թանկացնելու է վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկերի տոկոսադրույքները: Սա իր հերթին տանելու է բանկերի և մեծ վարկային կազմակերպությունների կողմից ֆինանսական շուկայի մոնոպոլիզացմանը: Անհասկանալի է, թե ինչ հիմնավորմամբ և ինչ տնտեսական հաշվարկների հիման վրա է պետական տուրքը այդքան բարձրացվում վարկային կազմակերպությունների համար և ավելի փոքր չափով բանկերի համար, երբ բանկերի կապիտալը 30 մլրդ. դրամ է, իսկ վարկայիններինը՝ 150 մլն: Միաժամանակ, ընդունելի չէ վարկային կազմակերպությունների այն մասնաճյուղերի համար, որոնք զբաղվում են արտարժույթի առք ու վաճառքով, միանգամից 4 անգամ տուրքի բարձրացումը, երբ այդ մասնաճյուղերը զբաղվում են միայն վարկեր տրամադրելով և փոքր քանակի արտարժույթի փոխանակման գործառույթներով: Այստեղ էական է նաև, որ վարկայինների մասնաճյուղերը հիմնականում մայրաքաղաքից դուրս են գործում: Մյուս կողմից վարկային կազմակերպությունները 2006 թվից սկսած իրենց մասնաճյուղերի համար տարեկան վճարում են պետական		ֆինանսավարկային հատվածի կազմակերպությունների գործունեության համար անհրաժեշտ լիցենզիայի մասով վճարվող պետական տուրքի դրույքաչափերի հարցը բազմակողմանիորեն քննարկվել է ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նիստերում, այդ թվում՝ ոլորտի ներկայացուցիչների և Կենտրոնական բանկի ներկայացուցիչների մասնակցությամբ: Քննարկման արդյունքներով, հաշվի առնելով նաև ֆինանսավարկային հատվածի կազմակերպությունների առանձին խմբերի գործունեության ֆինանսական արդյունքները, կայացվել են համապատասխան որոշումներ, որոնք մեր կարծիքով հավասարակշռված են, բխում են արդարության սկզբունքից և որոշակիորեն լուծում են նախագծերի փաթեթի ընդունման հիմնավորմամբ հետապնդվող նպատակներին հասնելու խնդիրը:

	տուրքեր: Ներկայացուցչությունների մասով պետական տուրք կիրառելը ևս առաջարկում ենք հանել, քանի որ ներկայացուցչությունները որևէ ֆինանսական գործունեություն չեն իրականացնում:		
ՀՀ ԱԺ պատգամավոր, տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Բաբկեն Թունյան	Առաջարկվում է վերանայել ֆինանսավարկային ոլորտի կազմակերպությունների գործունեության համար նախատեսված պետական տուրքի դրույքաչափերի բարձրացման ռազմավարությունը՝ նպատակ ունենալով փոխանակման կետերի և գրավատների համար առաջարկվող պետական տուրքի դրույքաչափերը նվազեցնել և փոխարենը հարկային եկամուտների ակնկալվող մեծությունը պահպանելու համար որոշակիորեն բարձրացնել ոլորտի ինստիտուցիոնալ միավորների (բանկեր, վարկային կազմակերպություններ, ապահովագրական ընկերություններ) համար նախագծով առաջարկվող դրույքաչափերը	Ընդունվել է	Տնտեսության ֆինանսավարկային հատվածի կազմակերպությունների գործունեության համար անհրաժեշտ լիցենզիայի մասով վճարվող պետական տուրքի դրույքաչափերի հարցը բազմակողմանիորեն քննարկվել է ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նիստերում, այդ թվում՝ ոլորտի ներկայացուցիչների և Կենտրոնական բանկի ներկայացուցիչների մասնակցությամբ: Քննարկման արդյունքներով, հաշվի առնելով նաև ֆինանսավարկային հատվածի կազմակերպությունների առանձին խմբերի գործունեության ֆինանսական արդյունքները, կայացվել են համապատասխան որոշումներ, որոնք մեր կարծիքով հավասարակշռված են, բխում են

			արդարության սկզբունքից և որոշակիորեն լուծում են նախագծերի փաթեթի ընդունման հիմնավորմամբ հետապնդվող նպատակներին հասնելու խնդիրը:
	Առաջարկվում է կենտրոնացված մատակարարումների կազմակերպման շրջանակներում անմաքս առևտրի խանութի կազմակերպչին ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների մատակարարման գործարքներն ազատել ակցիզային հարկից և ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորումից:	Ընդունվել է	Նախագծում կատարվել են համապատասխան լրացումներ:
ՀՀ Աժ պատգամավոր Հայկ Սարգսյան	Հարկային օրենսգրքի 258-րդ հոդվածի համաձայն՝ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ստացվող եկամուտները հարկվում են շրջանառության հարկի 8 տոկոս, իսկ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողների կողմից Հայաստանի Հանրապետությունում կիրառվող՝ տնտեսական գործունեության դասակարգչի «Հանրային սննդի կազմակերպում» հատվածում չներառվող՝ այլ ակտիվների օտարումից, ինչպես նաև այլ գործունեությունից ստացվող եկամուտները՝ 20 տոկոս դրույքաչափով: Վերոնշյալը լուրջ խնդիր է առաջացնում շրջանառության հարկով աշխատող հյուրանոցային ծառայություններ իրականացնող	Ընդունվել է	Ներկայացված խնդիրը կարգավորվել է Աժ պատգամավոր Եղիշե Սողոմոնյանի կողմից ներկայացված առաջարկության հիման վրա:

	կազմակերպությունների համար: Անկախ ընդհանուր հասույթի մեջ հանրային սննդի ծառայություններից ստացվող իրացման շրջանառության ունեցած տեսակարար կշռից՝ հյուրանոցային ծառայություններ մատուցող կազմակերպությունները հանրային սննդի հետ առնչություն ունենալու դեպքում, պետք է հյուրանոցային և այլ ծառայությունների իրացման շրջանառությունը հարկեն 20 %-ով: Օրինակ՝ <<Ծաղկահովիտ>> ՍՊԸ-ի հիմնական գործունեությունը հանդիսանում է Ծաղկաձոր քաղաքում համալիր հյուրանոցային ծառայության մատուցումը և, այդ ծառայությունը լիարժեք մատուցելու նպատակով, կազմակերպությունը հյուրերին տրամադրում է նաև սնունդ իր տարածքում գտնվող ճաշարանում և բարում՝ օգտագործելով տնտեսական գործունեության ՏԳՏՊ I56.29.1 հանրային սննդի ծառայության մատուցման դասակարգիչը: Ստորև ներկայացվում է կազմակերպության իրացումից հասույթի տեսակարար կշիռները. <table><tr><td></td><td></td><td>Հյուրանոցային ծառայություն</td><td>Հանրային սննդի ծառայություն</td></tr><tr><td>2018թ-ի 1-ին եռամսյակ</td><td>-</td><td>79</td><td>21</td></tr></table>		

2018թ-ի 2-րդ եռամսյակ		54	46
2018թ-ի 3-րդ եռամսյակ		64	36
2018թ-ի 4-րդ եռամսյակ		71	29
Միջին տարեկան տեսակարար կշիռը 2018թ-ին		***67***	***33***
2019թ-ի 1-ին եռամսյակ		74	26

Վերոգրյալով պայմանավորված՝ առաջարկվում է Հարկային օրենսգրքի 258-րդ հոդվածը լրացնել 4-րդ մասով հետևյալ խմբագրությամբ.

«4. Հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողների կողմից Հայաստանի Հանրապետությունում կիրառվող՝ տնտեսական գործունեության դասակարգչի «Հանրային սննդի կազմակերպում» հատվածում չներառվող՝ այլ ակտիվների օտարումից, ինչպես նաև այլ գործունեությունից ստացվող եկամուտների նկատմամբ հաշվարկվող սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափը (տոկոսը) չի կիրառվում, եթե հաշվետու ժամանակահատվածում այդ եկամուտները ստացվել են հիմնական գործունեության իրականացման

	արդյունքում: Սույն մասի կիրառության իմաստով՝ հիմնական գործունեություն է համարվում գործունեության այն տեսակը, որը հաշվետու ժամանակաշրջանում ստացված եկամտի ընդհանուր ծավալում փաստացի ունեցել է առավել մեծ տեսակարար կշիռ:» Վերոնշյալ դրույթը չընդունելու հետևանքով, խնդրո առարկայի հետ առնչվող կազմակերպություններն ստիպված վարձակալության են հանձնում սննդի կազմակերպման ծառայությունները, որն իր հետ բերում է բազմաթիվ կազմակերպական խնդիրներ (օրինակ՝ տուրիստական կազմակերպությունները <u>միևնույն հաճախորդի</u> հանգստի կազմակերպման նպատակով ստիպված են լինելու ամրագրում կատարել 2 տարբեր կազմակերպություններում, վճարում կատարել մասնատված և այլն):		
ՀՀ ԱԺ պատգամավոր Արկադի Խաչատրյան	Առանց Օրենսգրքի նոր հայեցակարգի մշակման, հանրային և գործարար շրջանակների հետ քննարկման և առանց հանրային համաձայնության Օրենսգրքի նախագծի ներկայացումը համարվում է անընդունելի: Օրենսգրքի հայեցակարգով պետք է հստակ սահմանվեն հարկային և մաքսային քաղաքականության հիմնական նպատակները, սկզբունքները, քայլերը, դրանց հերթականությունն ու ժամկետները, որով պետք է իրականացվեն	Ընդունվել է ի գիտություն	Ներկայացվել է հայեցակարգային բնույթի առաջարկություն: Համաձայն ենք այն դիտարկման հետ, որ օրենսդրական համակարգային փոփոխություններին պետք է նախորդեն քննարկված և հաստատված հայեցակարգերը: Կառավարությունը հենց այդ ճանապարհով էլ գնացել է: Մասնավորապես, մինչև նախագծերի փաթեթի մշակումը,

	բարեփոխումները: Սկզբունքները պետք է հանդիսանան այն ֆիլտրը, որով պետք է իրականացվեն հետագա օրենսդրական փոփոխությունները, ընդ որում պետք է հետագայում բացառվի հռչակված նպատակներին և սկզբունքներին հակասող դրույթների սահմանումը Օրենսգրքով:		նախ, կատարվել են լայնամասշտաբ ու բազմակողմ ուսումնասիրություններ և վերլուծություններ, այնուհետև դրանց արդյունքներով պատրաստվել է ուղենիշային փաստաթուղթ: Ընդ որում, այդ բոլոր փաստաթղթերը հանրայնացվել են:
	Անընդունելի է համարվում «պահի տակ», «ոտքի վրա», իրավիճակային կամ կարճաժամկետ ֆիսկալ խնդիրներ լուծելու նպատակով որոշումների կայացումը և Օրենսգրքում փոփոխությունների կատարումը: Այդպիսի վարքագիծը պարունակում է հեղինակության ռիսկեր Կառավարության համար, խաթարում է վստահության մթնոլորտը, մեծացնում է անորոշության և անկանխատեսելիության ռիսկերը բիզնեսի համար, որի համար չափազանց կարևոր է կայունությունը, կանխատեսելիությունը և ի դեմս պետության վստահելի գործընկեր ունենալու հանգամանքը:	Ընդունվել է ի գիտություն	Ներկայացվել է հայեցակարգային բնույթի առաջարկություն: Միևնույն ժամանակ, հարկ է նկատել, որ նախագծերի փաթեթը ոչ մի դեպքում չի կարող որակվել որպես հապճեպ կայացված որոշումների վրա հիմնված՝ հենց միայն այն պատճառով, որ նախագիծն անցել է աննախադեպ քննարկումների բոլոր հնարավոր փուլերը և շուրջ 1 տարի քննարկվել է բոլոր հնարավոր շահագրգիռ կողմերի հետ: Նախագիծն ԱԺ-ում քննարկվում է արդեն ավելի քան 2.5 ամիս:
	Հարկային և մաքսային քաղաքականությունը պետք է թիրախավորի ոչ միայն զուտ ֆիսկալ՝ «բյուջե լցնելու» խնդիր, այլ նախ և առաջ՝ բարենպաստ գործարար և գրավիչ ներդրումային միջավայրի ձևավորման և երկրի կայուն	Ընդունվել է ի գիտություն	Ներկայացվել է հայեցակարգային բնույթի առաջարկություն: Ընդ որում, նույն սկզբունքներն արտացոլված են նաև Կառավարության կողմից

	տնտեսական զարգացման խնդիր: Հարկային և մաքսային համակարգերը պետք է ապահովեն երեք խնդիրների լուծում՝ գործարար բարենպաստ միջավայրի ձևավորում, ստվերի դեմ արդյունավետ պայքար, եկամուտների կայունության ապահովում: Այդ համակարգերը պետք է լինեն արդյունավետ, պարզ, հասկանալի և կանխատեսելի հարկ վճարողի համար: Հարկային օրենսդրության, հարկման շեմերի և հարկային ռեժիմների հաճախակի փոփոխությունը մեծացնում է անորոշությունը և անկանխատեսելիությունը բիզնեսի համար, ինչը չի կարող նպաստել վստահության մթնոլորտի ձևավորմանը գործարար աշխարհի և պետության միջև:		պատրաստված և հրապարակված այն ուղենիշային փաստաթղթում, որը հիմք է հանդիսացել նախագծերի փաթեթի մշակման համար:
	Հարկային բեռի նվազեցումը, վարչարարության արդյունավետության բարձրացումը, «մահակի» քաղաքականությունից գործընկերության քաղաքականությանն անցումը, ինչպես նաև տնտեսության մրցունակության բարձրացումը, արտահանելի հատվածի, այդ թվում՝ զբոսաշրջության համար, փոքր և միջին բիզնեսի, տարածքային համաչափ զարգացման, ներառական տնտեսական աճի համար բարենպաստ պայմանների ստեղծումը պետք է հանդիսանան կարևորագույն խնդիրները, որոնք պետք է լուծվեն Օրենսգրքում փոփոխություններ մշակելիս:	Ընդունվել է ի գիտություն	Ներկայացվել է հայեցակարգային բնույթի առաջարկություն: Ընդ որում, նույն սկզբունքներն արտացոլված են նաև Կառավարության կողմից պատրաստված և հրապարակված այն ուղենիշային փաստաթղթում, որը հիմք է հանդիսացել նախագծերի փաթեթի մշակման համար:

	Պետք է սովորել հարկ վճարել և պետք է ձևավորել հարկ վճարելու մշակույթ: Դրա վրա ազդում են երկու կարևոր հանգամանք՝ վճարված հարկերի թափանցիկ, նպատակային և արդյունավետ ծախսումը և հարկերը հավաքագրելիս արդարության և բոլոր հարկ վճարողների՝ օրենքի առջև հավասար լինելու սկզբունքի ապահովումը:	Ընդունվել է ի գիտություն	Ներկայացվել է հայեցակարգային բնույթի առաջարկություն: Ընդ որում, նույն սկզբունքներն արտացոլված են նաև Կառավարության կողմից պատրաստված և հրապարակված այն ուղենիշային փաստաթղթում, որը հիմք է հանդիսացել նախագծերի փաթեթի մշակման համար:
	Պետք է ներողամիտ կամ մեղմ գտնվել անզգուշությամբ կատարված խախտումների նկատմամբ, և խիստ՝ հարկերից չարամտորեն խուսափողների նկատմամբ: Քրեական օրենսգրքով նախատեսված համապատասխան դրույթները (205-րդ հոդվածը) ենթակա են վերանայման: Ստվերային տնտեսության համար հարմարեցված այդ դրույթը պետք է փոխարինվի տնտեսական (ֆինանսական) պատասխանատվության խիստ միջոցներով:	Ընդունվել է ի գիտություն	Ներկայացվել է հայեցակարգային բնույթի առաջարկություն, որը, սակայն, քննարկման ներկայացված նախագծերի փաթեթի հետ ուղղակի առնչություն չունի:
	Պետք է փոխվի հարկային ծառայողի վերաբերմունքը հարկ վճարողի նկատմամբ: Անհրաժեշտ է հաստատել գործընկերային հարաբերություններ գործարարի հետ, որովհետև պետությունը պակաս շահագրգռված չէ գործի զարգացման, աշխատատեղերի ստեղծման հարցում, քան ինքը՝ գործարարը: Պետք է անցում կատարել պատժիչ քաղաքականությունից	Ընդունվել է ի գիտություն	Ներկայացվել է հայեցակարգային բնույթի առաջարկություն, որը, սակայն, քննարկման ներկայացված նախագծերի փաթեթի հետ ուղղակի առնչություն չունի:

	կանխարգելիչ, համագործակցող քաղաքականության: Անհրաժեշտ է վերանայել նաև հարկային և մաքսային ծառայողների վարձատրության համակարգը: Գործարարության զարգացումը հանդիսանում է երկրի տնտեսական զարգացման, գործազրկության կրճատման, եկամուտների ավելացման, սոցիալական խնդիրների լուծման հիմնական ուղին: Հետևաբար, գործարարությունը, գործարարներն ու ներդրողները պետք է գտնվեն պետության հոգատար ուշադրության կենտրոնում:		
	Անհրաժեշտ է զերծ մնալ արտադրության գործոնների (հումք, սարքավորումներ, տեխնոլոգիաներ, վառելիք (բենզին, դիզելային վառելիք, սեղմված բնական գազ), քսայուղեր և այլն) հարկման բեռի ավելացումից, ինչից զգալիորեն կախված են տեղական արտադրողի մրցունակությունը, տրանսպորտային ծախսերը, բեռնափոխադրումների արժեքը, գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման ծախսերը և այլն, ինչպես, նաև, առհասարակ, հասարակության լայն շերտերի սոցիալական վիճակը: Հարկային բեռը կարող է տեղափոխվել դեպի վերջնական սպառման այնպիսի ապրանքներ և ծառայություններ, որոնք չեն հանդիսանում առաջին անհրաժեշտության և	Ընդունվել է ի գիտություն	Հարկ է նկատել, որ առաջարկությամբ ներկայացված ապրանքների մասով նախագծով առաջարկվող ակցիզային հարկի դրույքաչափերը ենթադրում են ոչ թե հարկային բեռի ուղղակի բարձրացում, այլ ներկայումս կիրառվող խառը համակարգից (տոկոսային և հաստատուն դրույքաչափեր) միայն հաստատուն դրույքաչափերի կիրառության վրա հիմնված համակարգին անցում՝ հիմքում ունենալով յուրաքանչյուր ապրանքի համար հաշվարկված՝ ակցիզային հարկի հաստատուն դրույքաչափերը: Ինչ վերաբերում է ակցիզային

	սոցիալական նշանակության ապրանքներ կամ չեն հանդիսանում այնպիսի ծառայություններ, որոնցից օգտվում են առավելապես փոքր և միջին բիզնեսները: Ցանկացած այդպիսի ապրանքի թանկացումը կարող է բերել առանձին ճյուղի մրցունակության անկման, հանրության լայն խավերի, հատկապես սոցիալապես խոցելի խավերի աղքատացման և կյանքի կենսամակարդակի էլ ավելի անկման, փոքր և միջին բիզնեսի վիճակի վատթարացման: Մինչդեռ տնտեսական հեղափոխությունը և ներառական տնտեսական աճը ճիշտ հակառակի մասին է: Այս առումով, առանձնահատուկ զգուշավորություն է պետք ցուցաբերել արտահանելի առաջնահերթ ոլորտի արտադրանք հանդիսացող և դեռևս ներքին մրցունակության խնդիր ունեցող առանձին արտադրանքների նկատմամբ (այդ թվում՝ առանձին գնային սեգմենտներին պատկանելիության մասով): Այս համատեքստում, նշվում է, որ գինեգործությունը որպես առաջնահերթ ճյուղ դիտարկող երկրում առնվազն չպետք է հարկային բեռ ավելացվի այդ ճյուղի արտադրանքի (գինու) վրա, մինչդեռ անհրաժեշտ է քննարկել ճիշտ հակառակը՝ ակցիզային հարկը նվազեցնելու հարցը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ անընդունելի է համարվում առաջիկա		հարկի դրույքաչափերը տարեկան 4 տոկոս ավելացնելու առաջարկության հիմնավորումներին, ապա այդ կապակցությամբ հայտնում ենք, որ դրանք ներկայացվել են «Լուսավոր Հայաստան» խմբակցության նույնաբովանդակ առաջարկության շրջանակներում:

	տարիներին տարեկան 4%-ով ակցիզային հարկի բարձրացումը՝ պտուղներից և հատապտուղներից պատրաստված օղու, կոնյակի, բրենդիի, գարեջրի, գինիների, քսայուղի, բենզինի , դիզելային վառելիքի, սեղմված բնական գազի և նավթամթերքի համար:		
	Պետք է բարենպաստ պայմաններ ստեղծվեն արտահանելի հատվածի զարգացման համար (SS, արդյունաբերություն, գյուղատնտեսություն, զբոսաշրջություն) ոչ արտահանելի հատվածի (առևտուր, ծառայություններ) համեմատ: Միևնույն ժամանակ, նշվում է, որ հանրային սնունդը, հյուրանոցային ծառայությունները և այլ հարակից ծառայություններն արտահանելի են և կարևոր են զբոսաշրջության զարգացման համար:	Ընդունվել է ի գիտություն	Ներկայացվել է հայեցակարգային բնույթի առաջարկություն: Ընդ որում, նույն սկզբունքներն արտացոլված են նաև Կառավարության կողմից պատրաստված և հրապարակված այն ուղենիշային փաստաթղթում, որը հիմք է հանդիսացել նախագծերի փաթեթի մշակման համար: Ինչ վերաբերում է հանրային սննդի և հյուրանոցային գործունեության համար նպաստավոր պայմանների ձևավորմանը, ապա հայտնում ենք, որ նախագծերի փաթեթով այս ոլորտների համար նույնպես կատարվում են էական բարելավումներ:
	Անհրաժեշտ է նախատեսել նպատակային ներդրումային քաղաքականությանը նպաստող դրույթներ՝ առաջնահերթությունը տալով իրենց հետ նոր տեխնոլոգիաներ և գիտելիք բերող	Ընդունվել է ի գիտություն	Ներկայացվել է հայեցակարգային բնույթի առաջարկություն, որի վերաբերյալ առարկություններ չկան:

	ներդրողներին, նախ և առաջ տրանսնացիոնալ կորպորացիաներին և այլ ինստիտուցիոնալ ներդրողներին:		
	Բարենպաստ պայմաններ (այդ թվում՝ հարկային խթաններ) պետք է ստեղծել արդյունաբերության, արտադրական պրոցեսների տեխնոլոգիական վերազինման համար, բարձր արտադրողական գյուղատնտեսության անցում կատարելու համար:	Ընդունվել է ի գիտություն	Ներկայացվել է հայեցակարգային բնույթի առաջարկություն, որի վերաբերյալ առարկություններ չկան:
	Երկրի տարածքային համաչափ զարգացմանը և ներառական տնտեսական աճին նպաստելու համար նպատակահարմար է ստեղծել նաև հարկային խթաններ ներդրումները դեպի մարզեր ուղղորդելու համար: Պետք է աջակցել մարզերում տնտեսական զարգացմանը և ներառական տնտեսական աճին նպաստող բիզնես ծրագրերին: Ելնելով այն հանգամանքից, որ մարզերում իրականացվող լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները իրենց շրջանառությամբ և ծավալներով համադրելի չեն Երևանում, իսկ առանձին դեպքերում հատկապես Երևանի կենտրոնում իրականացվող նույն գործունեության հետ, անհրաժեշտ է տվյալ գործունեությամբ զբաղվելու համար լիցենզիայի կամ թույլտվության համար նախատեսված պետական տուրքը օրենքով սահմանել՝ տրոհելով այն ըստ գործունեության վայրերի (Երևան,	Առաջին առաջարկությունն ընդունվել է ի գիտություն Երկրորդ առաջարկությունն ընդունելի չէ	Գործող օրենսդրության համաձայն՝ սահմանամերձ համայնքների համար սահմանված է հարկերից ազատման արտոնության լայն շրջանակ: Ինչ վերաբերում է պետական տուրքին, ապա պետք է նկատի ունենալ, որ պետական տուրքը պետական մարմինների կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճար է: Հետևաբար, ներկայացված առաջարկության ընդունումը կնշանակի, որ պետական միևնույն մարմինը մարզերում գրանցված տնտեսավարող սուբյեկտներին մատուցում է այլ ծառայություններ, ինչը տրամաբանական չէ: Բացի այդ, տնտեսական ակտիվության աստիճանից կախված՝ հարկային

	մարզկենտրոններ, այլ քաղաքներ, գյուղական համայնքներ, սահմանամերձ համայնքներ, սահմանապահ համայնքներ):		պարտավորությունների մեծությունն արդեն փոխվում է, հետևաբար տնտեսապես ակտիվ գոտում և ոչ ակտիվ գոտում միևնույն գործունեությունն իրականացնող տնտեսավարող սուբյեկտներն արդեն իսկ գտնվում են տարբեր հարկային բեռի միջավայրում:
	Նպատակահարմար է քննարկել պետական բյուջե գանձվող հարկերի առանձին տեսակի կամ տեսակների (օրինակ՝ շրջանառության հարկի և (կամ) շահութահարկի) մի մասը համապատասխան համայնքային բյուջե ուղղելու հարցը (բացառությամբ՝ համակարգաստեղծ կազմակերպությունների շահութահարկի, որոնց ցանկը կարող է սահմանել Կառավարությունը), որը կլուծի համայնքների ֆինանսական անկախության և ինքնուրույնության, հետևաբար նաև անկախության հարցը, ինչպես նաև կստեղծի լրացուցիչ խթաններ համայնքի կողմից ներդրումների ներգրավման, ձեռնարկատիրության զարգացման, համայնքային հողի և այլ գույքի տրամադրման միջոցով բիզնեսի հետ գործընկերության հաստատման, համատեղ ծրագրեր իրականացնելու և համայնքի եկամուտները ավելացնելու ուղղությամբ: Սա կարող է լինել երկրի տարածքային	Ընդունվել է ի գիտություն	Ներկայացվել է հայեցակարգային բնույթի առաջարկություն, որը, սակայն, քննարկման ներկայացված նախագծերի փաթեթի հետ ուղղակի առնչություն չունի:

	համաչափ զարգացմանն ուղղված գործուն քայլ:		
	Համահարթ եկամտային հարկի ներդրման նպատակն է բարձր արտադրողական և բարձր վարձատրվող աշխատանքի խթանումը, ինչպես նաև ստվերային աշխատավարձերի կրճատման կամ ստվերից դուրս բերելու համար խթանների ստեղծումը: Այդ կապակցությամբ, նշվում է, որ միայն համահարթ եկամտային հարկի սահմանումը բավարար խթաններ չի ստեղծելու իրական աշխատավարձերը ստվերից դուրս բերելու համար: Հետևաբար անհրաժեշտ են նաև լրացուցիչ գործիքներ: Այդպիսինն է նվազագույն աշխատավարձի բարձրացումը, սահմանելով այն առնվազն նվազագույն սպառողական զամբյուղի չափով, որի միջոցով կարող ենք լուրջ քայլ կատարել հետևյալ հարցերի լուծման ուղղությամբ. 1) ապահովել որոշակի սոցիալական արդարություն տասնյակ հազարավոր քաղաքացիների համար, որոնք ստանում են աղքատության շեմից ցածր աշխատավարձ՝ ավելացնելով նրանց եկամուտը, 2) կրճատել երկրում առկա աղքատության ծավալները, 3) հաղթահարել այնպիսի մի խայտառակ երևույթ, որը կոչվում է աշխատող մարդու աղքատություն, 4) լրացուցիչ խթաններ ստեղծել ՀՀ-ում ձևավորված աշխատավարձերի մակարդակները (հատկապես ստորին	Ընդունվել է ի գիտություն	Ներկայացվել է հայեցակարգային բնույթի առաջարկություն, որը, սակայն, քննարկման ներկայացված նախագծերի փաթեթի հետ ուղղակի առնչություն չունի: Միևնույն ժամանակ, տեղեկացվում է, որ Համաշխարհային բանկի կողմից կատարված վերլուծությունների համաձայն՝ նախագծերի փաթեթի ընդունումը միջին և երկար ժամկետում, այլ հավասար պայմաններում, կնպաստի աղքատության մակարդակը 2 տոկոսային կետով կրճատելու համար:

	հատվածում) դեպի վերև տեղաշարժելու համար, ինչի արդյունքում հնարավոր է եկամտային հարկով հարկման բազայի ընդլայնում և պետական բյուջեի մուտքերի որոշակի չափով ավելացում:		
	Եկամտային հարկի դրույքաչափի նվազեցմանը զուգահեռ պետք է ներդրվի նոր միասնական գույքահարկի համակարգը, որի պարագայում գույքահարկը կհաշվարկվի անշարժ գույքի շուկայականին մոտ հաշվարկված կադաստրային արժեքի հիման վրա հարկման պրոգրեսիվ սանդղակով, ինչը կապահովի արժեքին համապատասխան գույքի արդարացումը հարկումը և համայնքային բյուջեների եկամուտների ավելացումը:	Ընդունելի է	Եկամտային հարկի համահարթ մոդելի ներդրման համատեքստում Կառավարությունը մեծապես կարևորում է գույքային հարկերի համակարգային բարեփոխումների կատարման անհրաժեշտությունը՝ միտված բարձրարժեք գույքի համարժեք հարկման մեխանիզմների ներդրմանը, ինչը նաև հնարավորություն կընձեռի արդյունավետ ձևով իրականացնել պետության վերաբաշխիչ գործառույթը: Այս առումով, տեղեկացվում է, որ առաջիկայում Կառավարությունը նախատեսում է հանդես գալ համապատասխան օրենսդրական փոփոխություններ կատարելու առաջարկությամբ:
	Անհրաժեշտ է քննարկել Հայաստանում չշահագործվող արտադրական նշանակության շենքերի և շինությունների, չմշակվող գյուղատնտեսական նշանակության հողերի և առանձին տեսակի անավարտ շինարարության օբյեկտների լրացուցիչ միասնական գույքահարկ և հողի	Ընդունվել է ի գիտություն	Հաշվի առնելով այն, որ ներկայացված առաջարկությունը նախագծի կարգավորման առարկային չի առնչվում, առաջարկում ենք այս հարցը քննարկել գույքային հարկերի համակարգի վերանայմանն

	հարկ սահմանելու նպատակահարմարությունը:		ուղղված օրենսդրական փոփոխությունների շրջանակներում:
	Առանձին գործունեության տեսակով զբաղվելու համար լիցենզիայի կամ թույլտվության համար նախատեսված պետական տուրքի տնտեսագիտորեն չհիմնավորված բարձրացումը կարող է դիտարկվել որպես խոչընդոտ տվյալ շուկա մուտք գործելու համար: Այն կարող է բերել շուկայի փոքր և միջին մասնակիցների փակմանը կամ կլանմանը խոշորների կողմից, ինչպես նաև այդ գործունեության առհասարակ դադարեցմանը մարզերում, ինչն ուղղակիորեն հակասում է Կառավարության հռչակած ազատ մրցակցության խթանման, փոքր և միջին ձեռներեցության զարգացման և տարածքային համաչափ զարգացման հռչակված նպատակներին:	Չի ընդունվել	Եթե դիտարկումը վերաբերում է տնտեսության ֆինանսավարկային հատվածի կազմակերպությունների գործունեության համար անհրաժեշտ լիցենզիայի մասով վճարվող պետական տուրքի դրույքաչափերին, ապա տեղեկացվում է, որ այդ հարցը բազմակողմանիորեն քննարկվել է ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նիստերում, այդ թվում՝ ոլորտի ներկայացուցիչների և Կենտրոնական բանկի ներկայացուցիչների մասնակցությամբ: Քննարկման արդյունքներով, հաշվի առնելով նաև ֆինանսավարկային հատվածի կազմակերպությունների առանձին խմբերի գործունեության ֆինանսական արդյունքները, կայացվել են համապատասխան որոշումներ, որոնք մեր կարծիքով հավասարակշռված են, բխում են արդարության սկզբունքից և որոշակիորեն լուծում են

			նախագծերի փաթեթի ընդունման հիմնավորմամբ հետապնդվող նպատակներին հասնելու խնդիրը:
	Նպատակահարմար է քննարկել հարկային խթաններ ստեղծելու հարցը (եկամտային հարկի արտոնյալ դրույքաչափ սահմանելու միջոցով) մարզային համայնքներում, սահմանամերձ և սահմանապահ համայնքներում աշխատող բժիշկների և այլ մասնագետների համար, որոնց պահանջված լինելու հանգամանքը և մասնագիտությունների ցանկը հաստատված կլինի Կառավարության կողմից, ինչպես նաև նշված համայնքներում գրանցված և այնտեղ գործող SS ոլորտի սկսնակ ընկերություններում աշխատող մասնագետների համար: Ընդ որում, նշյալ առաջարկի նպատակը երկրի տարածքային համաչափ զարգացմանը, մասնագետների պակասի խնդրի լուծմանը նպաստելն է, ինչպես նաև պայմանների ստեղծումն է մարզային համայնքներում SS ոլորտում նորարարական գաղափարների առաջացման, մասնագիտական կարողությունների զարգացման և դրանց իրացման համար լրացուցիչ հնարավորություններ և ներդրումային գրավչություն ձևավորելու համար:	Ընդունվել է ի գիտություն	Գործող օրենսդրության համաձայն՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործող՝ սկսնակ տնտեսավարող սուբյեկտները, անկախ տարածքային պատկանելիությունից, արդեն իսկ օգտվում են լայն շրջանակի հարկային արտոնություններից: Ինչ վերաբերում է որոշակի ոլորտներում և որոշակի համայնքներում իրականացվող աշխատանքի դիմաց ստացվող եկամուտները տարբերակված՝ եկամտային հարկի ավելի ցածր դրույքաչափով հարկելու առաջարկությանը, ապա գտնում ենք, որ այն խնդրի լուծման լավագույն ճանապարհը չէ, քանի որ հակադրվում է հարկման արդարության ու հավասարության սկզբունքներին: Այս առումով, կարծում ենք, որ բարձրացված խնդրի լուծման հնարավորությունները պետք է քննարկել ավելի հասցեական՝ բյուջետային աջակցության գործիքակազմի համատեքստում:

	Նպատակահարմար է քննարկել նաև հարկային խթաններ ստեղծելու հարցը (եկամտային հարկի արտոնյալ դրույքաչափ սահմանելու միջոցով) մայրերի աշխատանքը խթանելու համար (ընդ որում՝ արտոնյալ դրույքաչափը կարող է կախվածության մեջ դրվել, օրինակ՝ անչափահաս երեխաների քանակից), ինչպես գործազուրկ անձանց աշխատանքը ժամանակավորապես խթանելու համար (օրինակ՝ 6 ամիս եկամտային հարկի արտոնյալ դրույքաչափով հարկելու դրույթի սահմանում):	Ընդունելի չէ	Մայրերի և գործազուրկների աշխատանքը խթանելու համար աշխատանքի դիմաց ստացվող եկամուտները տարբերակված՝ եկամտային հարկի ավելի ցածր դրույքաչափով հարկելու առաջարկությունն ընդունելի չէ, քանի որ հակադրվում է հարկման արդարության ու հավասարության սկզբունքներին: Այս առումով, կարծում ենք, որ բարձրացված խնդրի լուծման հնարավորությունները պետք է քննարկել ավելի հասցեական՝ բյուջետային աջակցության գործիքակազմի համատեքստում՝ սոցիալական աջակցության ծրագրերի շրջանակներում:
	Անհրաժեշտ է հարկային խթաններ ստեղծել ինժեներական, գիտահետազոտական, փորձարարական-կոնստրուկտորական և փորձարարական-տեխնոլոգիական աշխատանքներ կատարելու համար երկրի նորարարական, ստեղծարար և տեխնոլոգիական զարգացումն ապահովելու նպատակով: Նախագծի 42-րդ հոդվածով լրացվող Օրենսգրքի 267-րդ հոդվածի 5-րդ մասի 2)-րդ կետի համաձայն՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ չեն կարող համարվել ի թիվս այլ ծառայություններ մատուցողների՝ նաև	Ընդունելի չէ	Առաջարկությամբ ներկայացված գործունեության տեսակները չեն բնութագրվում միկրոձեռնարկատիրության հատկանիշներով: Բացի այդ, գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքներ իրականացնողների և այդ աշխատանքների արդյունքներից օգտվողների համար Հարկային օրենսգրքով արդեն իսկ սահմանված է հարկային

	ինժեներական, տեղեկատվության մշակման և փոխանցման, գիտահետազոտական, փորձարարական-կոնստրուկտորական և փորձարարական-տեխնոլոգիական աշխատանքներ կատարողները: Նշվում է, որ բարձր տոխնոլոգիաների ոլորտի զարգացումը տնտեսական զարգացման առաջնահերթություն հռչակած երկրում պետք է ավելի բարենպաստ պայմաններ ստեղծվեն հատկապես նշյալ աշխատանքների կատարման համար: Հետևաբար, առաջարկվում է Նախագծից նշյալ աշխատանքների մասով սահմանված սահմանափակումը հանել:		արտոնությունների բավական լայն շրջանակ: Մասնավորապես՝ 1) այդ աշխատանքների կատարումն ազատված է ԱԱՀ-ից, 2) այդ աշխատանքների վրա կատարվող ծախսերը հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվում են կատարման տարվա ընթացքում՝ ամբողջությամբ, 3) այդ աշխատանքների արդյունքում ստեղծվող ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն նվազագույն ժամկետները որոշում են հարկատուները:
	Նախագծի 42-րդ հոդվածով լրացվող Օրենսգրքի 267-րդ հոդվածի 5-րդ մասի 8)-րդ կետի համաձայն՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ չեն կարող համարվել իրենց գործունեության ընթացքում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այլ ֆիզիկական անձանց աշխատանքն օգտագործող անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք: Այդ կապակցությամբ, նշվում է, որ խնդրո առարկա սահմանափակումը հիմնավորված չէ Օրենսգրքի 3-րդ հավելվածով սահմանված ցանկում ընդգրկված գործունեության մի շարք տեսակների իրականացման մասով, որոնք, ի դեպ, կարող են լինել իրականացվել	Ընդունելի չէ	Առաջարկության ընդունման դեպքում աշխատանքի ընդունված ֆիզիկական անձի մասով առաջանալու են եկամտային հարկի և սոցիալական վճարի պարտավորություններ, որոնց հաշվարկումն ու վճարումը այդ ֆիզիկական անձը պետք է կատարի ինքնուրույնաբար, քանի որ իր գործատուն նույնպես անհատ ձեռնարկատեր չհամարվող ֆիզիկական անձ է, հետևաբար չի կարող հանդես գալ որպես հարկային գործակալ: Հարկ է նկատի ունենալ նաև «Ժամանակավոր

	միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից, և որոնց պարագայում հաճախ օգտագործվում է ընտանիքի անդամների աշխատանքը (օրինակ՝ դարբնոցային գործունեության, զբոսաշրջային տների միջոցով հյուրանոցային ծառայությունների մատուցման և այլ դեպքերում): Հետևաբար, առաջարկվում է Նախագծով նախատեսված նշյալ սահմանափակումը չտարածել ընտանիքի անդամների աշխատանքը օգտագործելու դեպքերի վրա:		անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ՀՀ օրենքով, «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով սահմանված նպաստների (այդ թվում՝ մայրության նպաստի) հետ կապված խնդիրները, արձակուրդային գումարների, վերջնահաշվարկների, գործուղումների հավելումների հարցերը, որոնք անխուսափելիորեն առաջանալու են ներկայացված առաջարկությունն ընդունելու պարագայում: Մյուս կողմից, առաջարկում ենք հաշվի առնել այն, որ խնդիրն ունի շատ պարզ ու արագ լուծում, այն է՝ գործատուն հաշվառվում է որպես անհատ ձեռնարկատեր և խնդիրը լուծվում է նախագծով առաջարկվող կարգավորումների շրջանակներում:
	Օրենսգրքի 3-րդ հավելվածով սահմանված է այն գործունեության տեսակների ցանկը, որոնք կարող են իրականացվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից: Նշյալ ցանկի 13-րդ կետով նախատեսված է զբոսաշրջային տների միջոցով հյուրանոցային ծառայությունների	Ընդունվել է մասնակի	Նախաճաշի, ճաշի և ընթրիքի մասով նախագծում կատարվել են համապատասխան լրացումներ:

	մատուցման գործունեությունը: Այդ կապակցությամբ, նշվում է, որ հատկապես գյուղական բնակավայրերում զբոսաշրջային տների միջոցով հյուրանոցային ծառայությունների մատուցման հետ մեկտեղ զբոսաշրջիկներին մատուցվում են նաև նախաճաշ, ճաշ և ընթրիք, ինչպես նաև բազմաթիվ այլ հարակից ծառայություններ: Միկրոձեռնարկատիրության շրջանակներում զբոսաշրջային տների գործունեության հետ մեկտեղ նշյալ ծառայությունների համալիր մատուցման հնարավորության ընձեռումը թույլ կտա զարգացնել գյուղական և էկոտուրիզմը, ներքին զբոսաշրջությունը, ինչպես նաև կնպաստի երկրի տարածքային համաչափ զարգացմանը: Մինչդեռ, գյուղական համայնքում զբոսաշրջային տանը հանգրվանած զբոսաշրջիկին նախաճաշի մատուցումը որպես հանրային սննդի օբյեկտի գործունեություն դիտարկելը և շրջանառության հարկով հարկելը համարվում է անընդունելի՝ հաշվի առնելով այն, որ դա արժեզրկում է զբոսաշրջային տներին, միկրոձեռնարկատիրության սուբյեկտի կարգավիճակ տալով, հարկային արտոնության տրամադրման կարևորությունը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է նշյալ ցանկի 13-րդ կետը		

	շարադրել հետևյալ խմբագրությամբ. «13. Զբոսաշրջային տների միջոցով հյուրանոցային ծառայությունների մատուցում, իսկ գյուղական համայնքներում գտնվող զբոսաշրջային տների պարագայում նաև այդ զբոսաշրջային տանը հանգրվանած զբոսաշրջիկներին նախաճաշի, ճաշի կամ ընթրիքի մատուցում, ինչպես նաև հեծանիվների, ձիերի, ձկնորսության և այլ պարագաների վարձույթի, արդուկի, լվացքի, տարածքում էքսկուրսիաների, ավտոմեքենայով տրանսֆերի և հյուրանոցային ծառայություններին հարակից այլ ծառայությունների մատուցում:»:		
	Նախագծով չեն տրվում լուծումներ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից կազմակերպված քննարկումների ընթացքում ՓՄՁ սուբյեկտների ներկայացուցիչների կողմից բարձրացված մի շարք կարևոր խնդիրներին:	Ընդունվել է ի գիտություն	Ազգային ժողովի տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նիստերի ընթացքում խնդրո առարկա հարցերը մանրամասն քննարկվել են: Որոշ հարցերի մասով նախագծի լրամշակված տարբերակում առաջարկվում են կոնկրետ լուծումներ (օրինակ, նախագծով նախատեսվել է, որ կանխիկ վճարմամբ գործարքների կատարման սահմանափակումները չեն կիրառվում այն գործարքների մասով, որոնք կփաստաթղթավորվեն գնորդի ՀՎՀՀ-ի նշում պարունակող ՀԴՄ

			կտրոններով): Եղել են նաև այլ առաջարկություններ, որոնք չեն ընդունվել՝ պայմանավորված դրանց խնդրահարույց բնույթով, ինչպես նաև ընդհանուր քաղաքականությունից շեղվող հատկանիշներով:
	Նշվում է, որ չափազանց կարևորվում է ՀՀ ֆինանսների նախարարության կարողությունների զարգացումը, Կենտրոնական բանկի և միջազգային կառույցների աջակցությամբ մաթեմատիկական մոդելների մշակումը՝ ֆիսկալ քաղաքականության, հարկային և մաքսային դրույքաչափերի փոփոխության, հարկաբյուջետային այլ գործիքների կիրառման մակրոտնտեսական ազդեցությունը գնահատելու նպատակով, ինչը հնարավորություն կտա գնահատել այդ բնագավառում պետական քաղաքականության ազդեցությունը տնտեսության վրա:	Ընդունվել է ի գիտություն	Ներկայացվել է հայեցակարգային բնույթի առաջարկություն, որը, սակայն, քննարկման ներկայացված նախագծերի փաթեթի հետ ուղղակի առնչություն չունի:
	Անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել կորպորատիվ կառավարման մշակույթի զարգացման և կազմակերպությունների թափանցիկությունը ապահովելու ուղղությամբ:	Ընդունվել է ի գիտություն	Ներկայացվել է հայեցակարգային բնույթի առաջարկություն, որը, սակայն, քննարկման ներկայացված նախագծերի փաթեթի հետ ուղղակի առնչություն չունի:
ՀՀ ԱԺ պատգամավոր Միքայել Մելքումյան	Առաջարկվում է նախագծի 21-րդ հոդվածից հետո լրացնել նոր հոդված հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 22. Օրենսգրքի 78-րդ հոդվածի	Չի ընդունվել	Նշյալ առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարության դիրքորոշումը ներկայացվել է առաջարկության հեղինակի

<table>
<tr>
<td></td>
<td>5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
5. «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների համար Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ԱԱՀ-ի գումարները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարվում մինչև ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմնին վճարվող գումարներ:»:</td>
<td></td>
<td>կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (Պ-096-09.04.2019-ՏՀ-011/0) քննարկման շրջանակներում:</td>
</tr>
<tr>
<td></td>
<td>Առաջարկվում է նախագծի 32-րդ հոդվածով սահմանված Օրենսգրքի 150-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«1. Եթե սույն հոդվածի 2-15-րդ մասերով այլ բան սահմանված չէ, ապա հարկման բազայի նկատմամբ եկամտային հարկը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով.
<table>
<tr><th>Ժամանակահատված</th><th>Եկամտային հարկի դրույքաչափը</th></tr>
<tr><td>2020 թվականի հունվարի 1-ից</td><td>22 տոկոս</td></tr>
<tr><td>2021 թվականի հունվարի 1-ից</td><td>21.33 տոկոս</td></tr>
<tr><td>2022 թվականի</td><td>20.66 տոկոս</td></tr>
</table></td>
<td>Չի ընդունվել</td>
<td>Ներկայացված առաջարկությունը ենթադրում է եկամտային հարկի դրույքաչափերի՝ ավելի արագ նվազեցում, ինչը, բնականաբար, կարճաժամկետ հեռանկարում հանգեցնելու է պետական բյուջեի եկամուտների՝ ավելի մեծ չափով կորուստների: Հետևաբար, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ վերջնարդյունքում առաջարկվում է սահմանել եկամտային հարկի նույն դրույքաչափը (20 տոկոս)՝ գտնում ենք, որ նախագծով առաջարկվող մոտեցումն ավելի</td>
</tr>
</table>

	<table><tr><td>հունվարի 1-ից</td><td></td></tr><tr><td>2023 թվականի հունվարի 1-ից</td><td>20 տոկոս</td></tr></table>		հավասարակշռված է հարկաբյուջետային կայունության տեսանկյունից:
	Առաջարկվում է նախագծի 41-րդ հոդվածով սահմանված «24» թիվը փոխարինել «34» թվով: Առաջարկվում է նախագծի 42-րդ հոդվածով սահմանված Օրենսգրքի 56-րդ գլխի խմբագրության 267-րդ հոդվածի 3-րդ մասի «24» թվերը փոխարինել «34» թվերով:	Չի ընդունվել	Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ շրջանառության հարկ վճարողների շուրջ 93 տոկոսի իրացման շրջանառության տարեկան մեծությունը չի գերազանցում 36 մլն. դրամը: Սա նշանակում է, որ առաջարկության ընդունման դեպքում, այլ հավասար պայմաններում, շուրջ 65 հազ. տնտեսավարող սուբյեկտներ շրջանառության հարկի համակարգից կարող են տեղափոխվել միկրոձեռնարկատիրության հարկման համակարգ: Եթե անգամ ենթադրենք, որ դրանց կեսը զբաղվում է այնպիսի գործունեության տեսակով, որը չի կարող լինել միկրոձեռնարկատիրության հարկման համակարգում, ապա, միևնույն է, առաջարկությունը խիստ խնդրահարույց է: Բացի այդ, գտնում ենք, որ միկրոձեռնարկատիրության համակարգում թույլատրվող գործունեության տեսակների

			համար տարեկան կտրվածքով 24 մլն. դրամ իրացման շրջանառության առավելագույն շեմը ավելի քան հիմնավորված է՝ հաշվի առնելով մեկ օրվան բաժին ընկնող իրացման շրջանառության չափն ու վերոնշյալ գործունեության տեսակների միջին շահութաբերությունը:
	Առաջարկվում է նախագծի 42-րդ հոդվածով սահմանված Օրենսգրքի 56-րդ գլխի խմբագրության 267-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3) առևտրի իրականացման վայրերում, առևտրի կենտրոններում և տոնավաճառներում առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը, ինչպես նաև անձնական օգտագործման ավտոմեքենաների առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ կամ էլեկտրոնային առևտրի շրջանակներում առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը.»:	Չի ընդունվել	Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ շուրջ 41 հազ. շրջանառության հարկ վճարողներ զբաղվում են առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ: Ընդ որում, նրանց տարեկան իրացման շրջանառության միջին մեծությունը կազմում է ընդամենը 10.7 մլն. դրամ: Այս առումով, առաջարկության ընդունումը գործնականում նշանակում է նշյալ տնտեսավարող սուբյեկտների հիմնական մասին տեղափոխել միկրոձեռնարկատիրության հարկման արտոնյալ համակարգ, ինչն ընդունելի չէ՝ հետևյալ հիմնական նկատառումներով. 1) առաջարկության ընդունման դեպքում կստացվի, որ ներքին

			շուկայում առևտրական գործունեությունը, միտված չլինելով արտահանմանը, հիմնական մասով ազատվում է հարկերից, ինչը որևէ տնտեսագիտական հիմնավորում չունի, 2) կխաթարվի միկրոձեռնարկատիրության հարկման արտոնյալ համակարգի հասցեականությունը, 3) կմեծանա ամեն գնով իրացման շրջանառությունները թերհայտարարագրելու և միկրոձեռնարկատիրության հարկման արտոնյալ համակարգում անարդարացիորեն «տեղավորվելու» տնտեսական շարժառիթը:
ՀՀ ԱԺ պատգամավոր Գևորգ Պապոյան	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Օրենսգրքում կենսաբանական ակտիվների հետ կապված որևէ կարգավորում նախատեսված չէ, բացի այդ, Օրենսգրքի 121-րդ հոդվածում կենսաբանական ակտիվներից բանող անասունները և բազմամյա տնկիները ներառվում են հիմնական միջոցների կազմում և դրանց համար սահմանվում է նվազագույն ամորտիզացիոն ժամկետ՝ առաջարկվում է Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ շարադրել հետևյալ խմբագրությամբ. «19) **հիմնական միջոց**՝ հաշվապահական հաշվառման համապատասխան	Ընդունվել է ի գիտություն	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայացված առաջարկությունը բազմակողմանի քննարկում է ենթադրում, առաջարկում ենք առաջարկությանն անդրադառնալ հետագա օրենսդրական փոփոխությունների շրջանակում:

	միջազգային ստանդարտներով սահմանված հիմնական միջոց, կենսաբանական ակտիվ (բացառությամբ՝ սպառվող կենսաբանական ակտիվի) և ներդրումային գույք.»:		
	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Օրենսգրքում բնամթերային (ոչ դրամական) ձևով արտահայտված գործարքների ու գործառնությունների սահմանման բացակայությունը խնդիրներ է առաջացնում անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց բնամթերային (ոչ դրամական) ձևով վճարված եկամուտների մասով՝ առաջարկվում է Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 67-րդ կետով. «67) բնամթերային (ոչ դրամական) ձևով արտահայտված գործարքներ ու գործառնություններ՝ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց ակտիվների (բացառությամբ դրամական միջոցների) անհատույց օտարում, ծառայությունների անհատույց մատուցում, այդ ֆիզիկական անձանց համար աշխատանքների անհատույց կատարում, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց ակտիվների (բացառությամբ՝ դրամական միջոցների) օտարում, ծառայությունների մատուցում, նրանց համար աշխատանքների կատարում՝	Ընդունվել է ի գիտություն	Գտնում ենք, որ բնամթերային (ոչ դրամական) ձևով արտահայտված գործարքների ու գործառնությունների՝ առաջարկվող սահմանումը բնամթերային ձևով արտահայտված գործարքների ու գործառնությունների շրջանակն ամբողջությամբ չի ընդգրկում: Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք բնամթերային ձևով արտահայտված գործարքների ու գործառնությունների սահմանման հստակեցմանն անդրադառնալ հետագա օրենսդրական փոփոխությունների շրջանակներում:

	այդ գործարքների կատարման օրվա դրությամբ շուկայական գնից 20 տոկոս և ավելի ցածր գնով:»:		
	Հաշվապահական և հարկային հաշվառման ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց եկամուտների հայտարարագրման, օրինական դաշտում գործող հաշվապահների և հարկային հաշվառում իրականացնողների համար արդար մրցակցային միջավայր ձևավորելու, ինչպես նաև պետական մարմիններում աշխատողների, մասնավորապես, հարկային ծառայողների կողմից ստվերային կարգով հարկ վճարողներին հաշվապահական և հարկային հաշվառման ծառայությունների մատուցման ռիսկը նվազեցնելու նպատակով առաջարկվում է Օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ. «Հարկ վճարողի (հարկային գործակալի) պաշտոնատար անձ կարող է հանդես գալ հարկ վճարողի (հարկային գործակալի) հետ քաղաքացիաիրավական պայմանագրով ծառայություններ մատուցող ֆիզիկական անձը կամ այդպիսի ծառայություններ մատուցող կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձը, ընդ որում՝ այդ մասին պարտադիր պետք է նշվի սույն մասով նախատեսված լիազորագրում:»:	Չի ընդունվել	Եթե խնդիրն այն է, որ սահմանափակվի հարկային ծառայողների կողմից ստվերային կարգով հարկ վճարողներին հաշվապահական և հարկային հաշվառման ծառայությունների մատուցման հնարավորությունը, ապա այդպիսի հնարավորությունը արդեն իսկ սահմանափակված է Օրենսգրքի 28-րդ հոդվածի 3-րդ մասով, որի համաձայն՝ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ պետական կամ համայնքային պաշտոն զբաղեցնող անձինք չեն կարող հանդես գալ որպես հարկ վճարողի պաշտոնատար անձինք:
	Առաջարկվում է Օրենսգրքի 55-րդ	Ընդունվել է	Նախագծում կատարվել է

	հոդվածի 10-րդ մասում «կազմակերպության» բառը փոխարինել «կազմակերպությունից» բառով, իսկ «ֆիզիկական անձի կողմից» բառերը փոխարինել «ֆիզիկական անձից» բառերով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս գործող խմբագրությամբ ստացվում է, որ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք են հանդիսանում ապրանք ձեռքբերող, աշխատանք ընդունող կամ ծառայություն ստացող, մինչդեռ խոսքը վերաբերում է ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանցից ձեռքբերումներին:		համապատասխան լրացում:
	Առաջարկվում է Օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում «վարձույթով» բառից հետո ավելացնել «կամ վարձակալությամբ» բառերը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարձակալության տրամադրման գործունեությունը վարձույթի գործունեությունից բովանդակային առումով չի տարբերվում, վարձույթը, ըստ էության, կարճաժամկետ տրամադրումն է, իսկ վարձակալությունը՝ երկարաժամկետ:	Չի ընդունվել	Կարծում ենք, որ վարձույթի և վարձակալության միջև, այնուամենայնիվ, առկա է բովանդակային տարբերություն: Մասնավորապես, վարձակալությունն առավելապես պասիվ գործունեություն է, մինչդեռ վարձույթն, ըստ էության, բնութագրվում է ձեռնարկատիրական գործունեության հատկանիշներով: Ներկայացված առաջարկությունը ռիսկային է նաև հնարավոր չարաշահումների տեսանկյունից, քանի որ տրանսպորտային միջոցը կարելի է մեկ կամ մի քանի օրով տրամադրել

			վարձակալության, և դրա հետ կապված՝ ԱԱՀ-ի գծով հաշվանցումներ կատարել:
	Առաջարկվում է Օրենսգրքի 73-րդ հոդվածի 11-րդ մասի վերջին նախադասությունը ուժը կորցրած ճանաչել՝ հաշվի առնելով այն, որ դրանով սահմանված դրույթը հակասում է նույն հոդվածի 14-րդ մասին, որի համաձայն՝ վերաձևակերպումներ չեն կատարվում, եթե հարկ վճարողը չի համարվում ԱԱՀ վճարող, մինչդեռ Օրենսգրքի 73-րդ հոդվածի 11-րդ մասի վերջին նախադասությամբ նշվում է, որ նշյալ մասը կիրառվում է շրջանառության հարկ վճարող և ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսացողներին, որոնք նույնպես ԱԱՀ չվճարող են:	Չի ընդունվել	Օրենսգրքի 73-րդ հոդվածի 11-րդ և 14-րդ մասերով կարգավորվում են տարբեր իրավահարաբերություններ: Մասնավորապես, Օրենսգրքի 73-րդ հոդվածի 11-րդ մասը վերաբերում է բոլոր այն դեպքերին, երբ անհատ ձեռնարկատերն այլևս գործունեություն չի իրականացնելու կամ նոտարը պաշտոնից ազատվելու է: Մինդեռ՝ Օրենսգրքի 73-րդ հոդվածի 14-րդ մասով սահմանված՝ ԱԱՀ վճարող չհամարվելու ժամանակաշրջանում վերաձևակերպումներ չկատարելու դրույթը վերաբերում է բոլոր այն դեպքերին, երբ կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը դադարում է համարվել ԱԱՀ վճարող, սակայն շարունակում է գործունեություն իրականացնել և համապատասխան ԱԱՀ դեբետային գումարները վերաձևակերպման ենթակա չեն, քանի որ հետագա

			գործունեության ընթացքում նորից ԱԱՀ վճարող համարվելու դեպքում այդ գումարները կարող են օգտագործվել հարկ վճարողի կողմից:
	Կոմիսիայի կամ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրերի շրջանակներում կոմիտենտի կամ պրինցիպալի կողմից ստացվող եկամտի հստակեցման նպատակով առաջարկվում է Օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր 2.1-ին կետով հետևյալ բովանդակությամբ. «2.1 Կոմիսիայի կամ գործակալի անունից հանդես եկող գործակալության պայմանագրերի հիման վրա ապրանքի մատակարարման կամ աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման դեպքերում կոմիտենտի կամ պրինցիպալի համար եկամուտ է համարվում մատակարարված ապրանքի կամ կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության դիմաց ստացվող ընդհանուր եկամտի և կոմիսիոների կամ գործակալի համար սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով որոշվող եկամտի դրական տարբերությունը:»:	Ընդունվել է ի գիտություն	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայացված առաջարկությունը բազմակողմանի քննարկում է ենթադրում, առաջարկում ենք առաջարկությանն անդրադառնալ հետագա օրենսդրական փոփոխությունների շրջանակում:
	Առաջարկվում է Օրենսգրքի 121-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի աղյուսակի 6-րդ տողում «բանող անասուններ, բազմամյա տնկիներ» բառերը փոխարինել	Ընդունվել է ի գիտություն	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայացված առաջարկությունը բազմակողմանի քննարկում է

	«կենսաբանական ակտիվներ (բացառությամբ՝ սպառվող կենսաբանական ակտիվների)» բառերով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների համաձայն՝ կենսաբանական ակտիվներ (բացառությամբ՝ սպառվող կենսաբանական ակտիվների) խումբը չի սահմանափակվում միայն բանող անասուններով և բազմամյա տնկիներով, կարող են լինել կաթնատու, սերնդատու, ձվատու, բրդատու կենդանիներ, ինչպես նաև սերմատու բույսեր:		ենթադրում, առաջարկում ենք առաջարկությանն անդրադառնալ հետագա օրենսդրական փոփոխությունների շրջանակում:
	Առաջարկվում է Օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «տրամադրված ակտիվների», «կատարված աշխատանքների» և «մատուցված ծառայությունների» բառերից առաջ լրացնել «անհատույց» բառը՝ նշյալ կետով սահմանված արտոնյալ դրույթը հատուցմամբ կատարվող գործարքների դեպքում չկիրառելի դարձնելու նպատակով:	Ընդունվել է ի գիտություն	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայացված առաջարկությունը բազմակողմանի քննարկում է ենթադրում, առաջարկում ենք առաջարկությանն անդրադառնալ հետագա օրենսդրական փոփոխությունների շրջանակում:
	Առաջարկվում է Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետում «նորմաների» բառից հետո լրացնել «(չափերի), Հայաստանի Հանրապետության տարածքում և տարածքից դուրս գործուղման դեպքում Օրենսգրքի 117-րդ հոդվածով սահմանված չափերը չգերազանցող գումարների» բառերը:	Ընդունվել է	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
	Շրջանառության հարկի համակարգում գործունեություն իրականացնող	Ընդունվել է ի գիտություն	Ներկայացված խնդիրը կարգավորվել է ԱԺ

	հյուրանոցային տնտեսության օբյեկտների համար գործունեության նպաստավոր պայմաններ ապահովելու նպատակով առաջարկվում է Օրենսգրքի 254-րդ հոդվածի 6-րդ մասում «սպառման կազմակերպումը» բառերից հետո լրացնել «բացառությամբ այն դեպքերի, երբ խոհարարական արտադրանքի օտարումը (այդ թվում՝ առաքմամբ) և (կամ) սպառման կազմակերպումը ներառվում են Հայաստանի Հանրապետությունում կիրառվող՝ տնտեսական գործունեության դասակարգչի «Կացության կազմակերպում» հատվածում և սպառվում են բացառապես այդ հատվածի շրջանակում ծառայություններ ստացող անձանց կողմից» բառերը:		պատգամավոր Եղիշե Սողոմոնյանի կողմից ներկայացված առաջարկության հիման վրա:
	Հաշվի առնելով այն, որ Օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված դրույթը հակասում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասին, ըստ որի, վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը՝ առաջարկվում է Օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետում նշված որոշումը Օրենսգրքի	Ընդունվել է	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում: Միաժամանակ, համարժեք լրացում է կատարվել նաև միկրո ձեռնարկատիրության մասով:

	398-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված երկամսյա ժամկետում դատական կարգով բողոքարկվելու դեպքում առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները շարունակում են համարվել շրջանառության հարկ վճարողներ, իսկ որոշումն անվավեր չճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռն ուժի մեջ մտնելու դեպքում փոխկապակցված ճանաչված առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները դադարում են համարվել շրջանառության հարկ վճարողներ՝ սույն կետում սահմանված ժամկետից:»:		
	Շրջանառության հարկ վճարողների կողմից ոչ նյութական ակտիվների օտարման դեպքում դրանց օտարումից ստացվող եկամուտները շրջանառության հարկով հարկելու նպատակով առաջարկվում է Օրենսգրքի 256-րդ հոդվածի 1-ին մասում «ռոյալթի» բառից հետո լրացնել «ինչպես նաև ոչ նյութական ակտիվի օտարումը» բառերը:	Ընդունվել է	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
	«Հայաստանի Հանրապետությունում կիրառվող՝ տնտեսական գործունեության դասակարգչի «Հանրային սննդի կազմակերպում» հատվածում ներառվող ակտիվների օտարման դեպքում՝ դրանք ձեռքբերելու ծախսերը շրջանառության հարկի գումարից նվազեցնելու նպատակով առաջարկվում է Օրենսգրքի 258-րդ	Ընդունվել է ի գիտություն	Ներկայացված խնդիրը կարգավորվել է ԱԺ պատգամավոր Եղիշե Սողոմոնյանի կողմից ներկայացված առաջարկության հիման վրա:

	հոդվածի 3-րդ մասում «խոհարարական արտադրանք չհանդիսացող այլ ակտիվների օտարման դեպքում՝ դրանք ձեռք բերելու ծախսերի)» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետությունում կիրառվող՝ տնտեսական գործունեության դասակարգչի «Հանրային սննդի կազմակերպում» հատվածում չներառվող այլ ակտիվների օտարման դեպքում՝ դրանք ձեռքբերելու ծախսերի» բառերով:		
	Առաջարկվում է Օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասում «ԱՏԳ ԱԱ 0405» ծածկագրից հետո ավելացնել «0406» ծածկագիրը (պանրի տեսակներ և կաթնաշոռ)՝ հաշվի առնելով այն, որ դրանց կշիռը ժամանակի ընթացքում նույնպես նվազում է, ինչպես նաև այն, որ 0405 ծածկագիրը նշյալ ցանկում ներառված լինելու պարագայում 0406 ծածկագիրը չներառելու տրամաբանություն չկա:	Ընդունվել է	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
	Առաջարկվում է Օրենսգրքի 450-րդ հոդվածի 1-ին մասից հանել «ԱԱՀ-ի և», ինչպես նաև «միասնական» բառերը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելն ընկած ժամանակաշրջանների համար հնարավոր չէ ներկայացնել ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկ:	Ընդունվել է	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
ՀՀ ԱԺ պատգամավոր Եղիշե Սողոմոնյան	Առաջարկվում է հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող հարկ վճարողների կողմից խոհարարական	Ընդունվել է	Նախագծում կատարվել են համապատասխան լրացումներ:

	արտադրանք չհանդիսացող ապրանքների իրացման շրջանառության նկատմամբ հարկի 20 տոկոս դրույքաչափը կիրառել միայն այն դեպքում երբ այդ հարկ վճարողը բավարարում է ԱԱՀ վճարող համարվելու՝ Օրենսգրքով սահմանված չափանիշներին:		
	Առաջարկվում է խաղային ոլորտում գործունեության բոլոր տեսակների համար (վիճակախաղ, շահումով խաղ, ինտերնետ շահումով խաղ) անհրաժեշտ լիցենզիայի տրամադրման համար սահմանված պետական տուրքը ավելացնել 100 տոկոսով՝ նախագծով սահմանված 20 տոկոսի փոխարեն:	Չի ընդունվել	Առաջարկում ենք այս հարցը լրացուցիչ քննարկման առարկա դարձնել հետագա օրենսդրական փոփոխությունների շրջանակներում:
	Առաջարկվում է մետաղադրամով և թղթադրամով շահագործվող ավտոմատների (որոնց միջոցով, օրինակ, սննդամթերքի վաճառք է իրականացվում կամ խաղեր են կազմակերպվում) գործունեության հարկումն իրականացնել պետական տուրքի համակարգում:	Ընդունվել է	Նախագծերի փաթեթում ներառված՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում (հոդված 3), ինչպես նաև ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ նախատեսող օրենքի նախագծում կատարվել են համապատասխան լրացումներ:
ՀՀ կառավարություն	Առաջարկվում է Օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «բ. ԵՏՄ անդամ պետությունից ապրանքի ներմուծման կամ ԵՏՄ անդամ պետություն ապրանքի արտահանման	Ընդունվել է	Նախագծում կատարվել են համապատասխան լրացումներ:

	գործառնությունների դեպքում՝ համապատասխանաբար ապրանքը Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) կամ ապրանքը Հայաստանի Հանրապետությունից արտահանելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից: Այն դեպքում, երբ ապրանքը Հայաստանի Հանրապետության սահմանը հատում է օդային տրանսպորտով կամ փոստային օպերատորի կողմից մատուցվող՝ փոստային ծառայության միջոցով, ԵՏՄ անդամ պետությունից ապրանքի ներմուծման կամ ԵՏՄ անդամ պետություն ապրանքի արտահանման գործառնությունների դեպքում ապրանքի հարկման բազան և սկզբնական արժեքը որոշվում են տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերի՝ կոնոսամենտում, բեռնագրում կամ այլ փաստաթղթերում նշված ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից.»:		
	Առաջարկվում է նախագծի 32-րդ	Ընդունվել է	Հարկային օրենսգրքում

	հոդվածում լրացնել է նոր 6-րդ մաս, որով կսահմանվի, որ իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում ֆիզիկական անձանց կողմից ներդրված գույքի օտարումից ստացվող եկամուտները, եթե գույքի օտարումը կատարվել է այն գույքը ներդրելուց հետո 3 տարվա ընթացքում, եկամտային հարկը հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով՝ 20 տոկոսի փոխարեն:		փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքի նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
	Առաջարկվում է հստակեցնել, որ մետաղադրամով և (կամ) թղթադրամով շահագործվող ավտոմատների միջոցով առևտուր իրականացնող տնտեսավարող սուբյեկտները նույնպես չեն կարող միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվել:	Ընդունվել է	Հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքի նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
	Առաջարկվում է սահմանել, որ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտները չեն կարող համարվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ:	Ընդունվել է	Հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքի նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
	Առաջարկվում է Օրենսգրքի 393-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով սահմանված՝ ծխախոտի արտադրանքի մասով դրոշմապիտակ տրամադրելու նպատակով 20 միլիոն հատ չգերազանցող դրոշմանիշի մնացորդ ունենալու պահանջը վերանայել և սահմանել 30 միլիոն հատ:	Ընդունվել է	Հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքի նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
	Առաջարկվում է ֆիզիկական անձանց կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության	Ընդունվել է	Հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքի

	առարկա համարվող գույքի օտարման մասով վերանայվող հարկման կանոնների գործողությունը՝ եկամուտների հաշվառման մեթոդի մասով, 2018 թվականի հուլիսի 1-ից հետադարձ ուժով կիրառել ոչ միայն ավտոմեքենաների օտարման գործարքների մասով, այլ նաև գույքի այլ տեսակների մասով:		նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
	Առաջարկվում է անշարժ գույքի հարկի ներդրման ժամկետը հետաձգել ևս մեկ տարով:	Ընդունվել է	Հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքի նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
	Առաջարկվում է նախագծերի փաթեթում կատարել խմբագրական բնույթի որոշակի շտկումներ:	Ընդունվել է	Նախագծերի փաթեթում կատարվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ: